ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 387
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքը (Տալվորիկ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Բաղրամյան համայնքի (Տալվորիկ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքը (Տալվորիկ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-091-0103-0017 կադաստրային ծածկագրով 11.5536 հա մակերեսով հողամասից 0.69298 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	04-091-0103-0017 կադաստրային ծածկագրով 11.5536 հա մակերեսով հողամասից 0.69298 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Բաղրամյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Տալվորիկ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Տալվորիկ բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, « 2 » «դեկտեմբերի» 2025 թ.